# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 1

ք.Երևան

«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱ»
Ինքնակարգավորվող Կազմակերպության 09.11.2024թ. կայացած Տարեկան հաշվետու ընդհանուր ժողովի

Նախագահությամբ Լ.Պետրոսյանի
Քարտուղարությամբ Գ.Հովսեփյանի

Կազմակերպության 113 անդամներից ներկա էին 100-ը.

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Ադամյան Արմենակ | 51. | Հարոյան Կամո |
| 2. | Ալեքսանյան Սաղաթել | 52. | Հարությունյան Սամվել |
| 3. | Ախոյան Կարեն | 53. | Հարությունյան Սերյոժա |
| 4. | Ամիրխանյան Լևոն | 54. | Հարությունյան Արտակ |
| 5. | Անտոնյան Արմեն | 55. | Հարությունյան Վարազդատ |
| 6. | Ապիկյան Արթուր | 56. | Հարությունյան Մարատ |
| 7. | Ապրեսյան Վահրամ | 57. | Հովհաննիսյան Ռուզան |
| 8. | Առուշանյան Արթուր | 58. | Ղազարյան Շաքե |
| 9. | Ասատրյան Վարազդատ | 59. | Ղազարյան Անահիտ |
| 10. | Ասատրյան Արսեն | 60. | Ղազարյան Արշակ |
| 11. | Ասլանյան Սուսաննա | 61. | Ղահրամանյան Խաչատուր |
| 12. | Ավագյան Գևորգ | 62. | Ղարիբյան Հարութ |
| 13. | Ավագյան Վահագն | 63. | Ղուկասյան Սամսոն |
| 14. | Ավագյան Սոնա | 64. | Մաթևոսյան Արմեն |
| 15. | Արաբյան Ժիրայր | 65. | Մանուկյան Սամվել |
| 16. | Արսենյան Աղասի | 66. | Մարգարյան Ռուզաննա |
| 17. | Աֆյան Ջիվանշիր | 67. | Մարտիկյան Հենրիկ |
| 18. | Բալասանյան Ռուբեն | 68. | Մարտիրոսյան Արտակ |
| 19. | Բանդուրյան Տարոն | 69. | Մարտիրոսյան Կարեն |
| 20. | Բարխուդարյան Էդուարդ | 70. | Մարտիրոսյան Հայկ |
| 21. | Բեկլույան Պետրոս | 71. | Մինասյան Սերյոժա |
| 22. | Բենգլյան Ալբերտ | 72. | Միրաքյան Սարգիս |
| 23. | Գաբրիելյան Վլադիմիր | 73. | Միքաելյան Արման |
| 24. | Գևորգյան Հարություն | 74. | Մկրտչյան Գարիկ |
| 25. | Գևորգյան Գևորգ | 75. | Մկրտչյան Արամ |
| 26. | Դանիելյան Վահե | 76. | Մովսիսյան Արմինե |
| 27. | Դավթյան Սոֆյա | 77. | Նազարյան Խաչիկ |
| 28. | Դավթյան Վահագն | 78. | Նազարյան Նարեկ |
| 29. | Ելինյան Անդրանիկ | 79. | Նազարեթյան Վահե |
| 30. | Եկմալյան Բաբկեն | 80. | Նիկողոսյան Դավիթ |
| 31. | Եղիազարյան Մակար | 81. | Պետրոսյան Լևոն Հ. |
| 32. | Եղյան Հովհաննես | 82. | Պետրոսյան Մուրադ |
| 33. | Եղյան Ռոբերտ | 83. | Պետրոսյան Լևոն Կ. |
| 34. | Էլոյան Արմենակ | 84. | Պետրոսյան Արտակ |
| 35. | Էլոյան Վաղինակ | 85.. | Պետրոսյան Վարդևան |
| 36. | Իսպիրյան Արամայիս | 86. | Սահակյան Տիգրան |
| 37. | Խալաթյան Ռուբեն | 87. | Սարգսյան Արթուր |
| 38. | Խամոյան Վահագն | 88. | Սարգսյան Արման |

| | | | |
|---|---|---|---|
| 39. | Խաչատրյան Արամ | 89. | Սարգսյան Արայիկ |
| 40. | Խաչատրյան Միհրան | 90. | Սարգսյան Լուսինե |
| 41. | Խաչատրյան Արմեն | 91. | Սարգսյան Նարեկ |
| 42. | Խաչատրյան Արգամ | 92. | Սողոմոնյան Հովհաննես |
| 43. | Խաչատրյան Էդմոնդ | 93. | Ստեփանյան Տիգրան |
| 44. | Խաչիկյան Մուշեղ | 94. | Վարդանյան Զավեն |
| 45. | Խաչիկյան Նարեկ | 95. | Վարդանյան Արարատ |
| 46. | Կարապետյան Արամ | 96. | Տեր-Վարդանյան Աշոտ |
| 47. | Կարապետյան Հայկ | 97. | Ստեփանյան Սպարտակ |
| 48. | Կոշեցյան Հայկ | 98. | Տոնոյան Արման |
| 49. | Հակոբյան Սեյրան | 99. | Փարսադանյան Արտաշես |
| 50. | Հայրապետյան Մայիս | 100 | Օհանյան Յուրիկ |

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿ կանոնադրության 8.2 կետի դրույթների՝ ապահովված է անդամների ընդհանուր թվի 2/3-ը, որի պայմաններում Ընդհանուր ժողովը իրավազոր է իրականացնելու աշխատանքներ և Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերով կայացնել որոշումներ:

Օ ր ա կ ա ր գ ու մ՝

1.«ՍԳԿԿ» ԻԿ 01.05.2023թ. առ 01.11.2024թ. գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունը /զեկուցող՝ Ա.Ելինյան/:

2.«ՍԳԿԿ» ԻԿ Վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը /զեկուցող՝ Զ.Աֆյան/:

3.«ՍԳԿԿ» ԻԿ Կարգապահական հանձնաժողովի հաշվետվությունը /զեկուցող՝ Ա.Մովսիսյան/:

4.«ՍԳԿԿ» ԻԿ Կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցը /զեկուցող՝ Տ.Սահակյան/:

5.«ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդի կազմի ընտրության հարցը :

6.Վերստուգիչ ծառայության կազմի ընտրության հարցը :

7.Կարգապահական հանձնաժողովի կազմի ընտրության հարցը :

8.Ընթացիկ հարցեր:

Կապված Դիտորդ խորհրդի նախագահ Արսեն Չիտչյանի բացակայության հանգամանքով ժողովը նախագահում է Դիտորդ խորհրդի ամենատարեց անդամ Լևոն Պետրոսյանը:

1. Մինչ օրակարգի հարցերի քննարկմանն անցնելը, «ՍԳԿԿ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Հ.Պետրոսյանը հանդես եկավ ողջույնի խոսքով և ձայնը փոխանցեց «ՍԳԿԿ» ԻԿ գործադիր տնօրեն Ա.Ելինյանին, ով ներկայացրեց «ՍԳԿԿ» ԻԿ 01.15.2023թ-ից մինչև 01.11.2024թ. գործունեության ֆինանսական հաշվետվությունը /ֆինանսական հաշվետվությունը կցվում է սույն արձանագրությանը/, այնուհետև Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Զ.Աֆյանը հաստատեց ֆինանսական հաշվետվության իսկությունը:

Կառավարիչների կողմից հարցեր տրվեցին Ա.Ելինյանին «ՍԳԿԿ» ԻԿ կողմից կատարված ծախսերի և մուտքերի վերաբերյալ, որոնց համար տրվեցին սպառիչ պատասխաններ:

Այնուհետև «ՍԳԿԿ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը առաջարկեց ֆինանսական հաշվետվության հաստատման հարցը դնել քվեարկության հետևյալ ձևակերպմամբ.

Հաստատել «ՍԳԿԿ» ԻԿ 01.05.2023թ-ից մինչև 01.11.2024թ. գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունը:

<<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Տարեկան ընդհանուր ժողովը

ՈՐՈՇԵՑ

Հաստատել՝ «ՍԳԿԿ» ԻԿ 01.05.2023թ-ից մինչև 01.11.2024թ. գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունը:

Որոշումը դրվեց քվեարկության.
Կողմ-100
Դեմ-0
Ձեռնպահ-0

Որոշումը ընդունվեց միաձայն :

2. Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ «ՍԳԿԿ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը առաջարկեց լսել Վերստուգիչ ծառայության հաշվետվությունը:Հաշվետվությունը ներկայացնի Վերստուգիչ ծառայության նախագահ Զ.Աֆյանը: Նա ներկայացրեց 01.05.2023թ-ից մինչև 01.11.2024թ Վերստուգիչ ծառայության կողմից կատարված աշխատանքների մասին հաշվետվություն:

Այնուհետև «ՍԳԿԿ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը առաջարկեց Վերստուգիչ ծառայության հաշվետվության հաստատման հարցը դնել քվեարկության հետևյալ ձևակերպմամբ.

Հաստատել «ՍԳԿԿ» ԻԿ 01.05.2023թ-ից մինչև 01.11.2024թ. Վերստուգիչ ծառայության հաշվետվությունը:

**<<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Տարեկան ընդհանուր ժողովը**

ՈՐՈՇԵՑ

Հաստատել «ՍԳԿԿ» ԻԿ 01.05.2023թ-ից մինչև 01.11.2024թ. Վերստուգիչ ծառայության հաշվետվությունը:

Որոշումը դրվեց քվեարկության.
Կողմ-100
Դեմ-0
Ձեռնպահ-0

Որոշումը ընդունվեց միաձայն :

3 Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ. «ՍԳԿԿ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը առաջարկեց լսել Կարգապահական հանձնաժողովի հաշվետվությունը և առաջարկեց որպեսզի հաշվետվությունը ներկայացնի Կարգապահական հանձնաժողովի նախագահի ժ/պ Ա.Մովսիսյանը:

Կարգապահական հանձնաժողովի նախագահի ժ/պ Ա.Մովսիսյանը ներկայացրեց հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքները և հանձնաժողովի կայացրած որոշումները:

Այնուհետև «ՍԳԿԿ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը առաջարկեց Կարգապահական հանձնաժողովի հաշվետվության հաստատման հարցը դնել քվեարկության հետևյալ ձևակերպմամբ.

Հաստատել «ՍԳԿԿ» ԻԿ. Կարգապահական հանձնաժողովի 01.05.2023թ-ից մինչև 01.11.2024թ հաշվետվությունը:

<<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Տարեկան ընդհանուր ժողովը

ՈՐՈՇԵՑ

Հաստատել «ՍԳԿԿ» ԻԿ Կարգապահական հանձնաժողովի 01.11.2016թ-ից մինչև 01.11.2019թ. հաշվետվությունը:
Որոշումը դրվեց քվեարկության.
Կողմ-100
Դեմ-0
Ձեռնպահ-0

Որոշումը ընդունվեց միաձայն :

4. «ՍԳԿԿ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը առաջարկեց անցնել օրակարգի 4-րդ հարցին, այն `է` <<ՍԳԿԿ>> ԻԿ Կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցը և ձայնը փոխանցեց Դիտորդ խորհրդի անդամ Տիգրան Սահակյանին:

Տիգրան Սահակյանը ներկայացրեց կանոնադրության և <<ՍԳԿԿ>> ԻԿ ժողովի կողմից հաստատված թվով երկու այլ փաստաթղթերի փոփոխությունների նախագիծը: Նա հայտնեց, որ նախագծերը մեկ ամիս առաջ աշխատակազմի կողմից ուղարկվել են բոլոր կառավարիչներին: Այս մեկ ամսվա ընթացքում նախագծի վերաբերյալ ներկայացվել են տարբեր նկատառումներ, մասնավորապես Վահրամ Ապրեսյանը հայտնել է, որ կանոնադրությունում կան կազմակերպության կողմից կառավարիչների նկատմամբ վերահսկողության իրավասություն սահմանող դրույթներ, որոնք անհրաժեշտ է հանել: Ապրեսյանը նաև առաջարկել է նախագծում կատարել փոփոխություն այն տրամաբանությամբ, որ խորհրդի անդամ առաջադրվել կարողանան ոչ թե երեք տարի <<ՍԳԿԿ>> ԻԿ-ին անդամակցած, այլ երեք տարի կառավարչի գործունեություն իրականացրած անձինք:

Տիգրան Սահակյանը հայտնեց նաև, որ առաջարկներ են եղել կանոնադրությունից հանել խորհրդի նախագահի բոլոր միանձնյա իրավասությունները` բացառությամբ խորհուրդը կառավարելուն ուղղված լիազորությունների:

Տիգրան Սահակյանը հայտնեց նաև, որ բազմաթիվ են եղել առաջարկները, որոնց համաձայն անընդունելի են համարվել խորհրդի նախագահությունը վեց ամիսը մեկ անգամ խորհրդի այլ անդամի փոխանցելու վերաբերյալ դրույթները:

Ժողովի ընթացքում հնչեցին բազմաթիվ առաջարկներ` ըստ որոնց անհրաժեշտ է նախագծից հանել խորհրդի նախագահությունը յուրաքանչյուր վեց ամիսը մեկ այլ խորհրդի անդամի կողմից իրականացնելու վերաբերյալ դրույթները:

Նախագահող Լևոն Պետրոսյանն առաջարկեց կանոնադրության նախագծում կատարել փոփոխություն, այն տրամաբանությամբ, որ խորհրդի անդամ կարողանան դառնալ առնվազն հինգ տարվա կառավարչի ստաժ ունեցող անձինք, իսկ խորհրդի նախագահ կարողանա դառնալ առնվազն տաս տարվա կառավարչի ստաժ ունեցող անձը:

Ժողովին մասնակցողների առաջարկով որոշվեց Լևոն Պետրոսյանի առաջարկը ներկայացնել քվեարկության, որից հետո քվեարկության արդյունքները հաշվի առնելով ժողովի քվեարկությանը դնել ամբողջ նախագիծը:

Լևոն Պետրոսյանի առաջարկին հավանություն տալու հարցը դրվեց ժողովի քննարկմանը:

<<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Տարեկան ընդհանուր ժողովը

ՈՐՈՇԵՑ

Հավանություն չտալ Լևոն Պետրոսյանի առաջարկին:
Որոշումը դրվեց քվեարկության.
Կողմ-10
Դեմ-90
Ձեռնպահ-0

Ժողովի քվեարկությանը դրվեց ժողովի ընթացքում արված առաջարկություններին համապատասխան լրամշակված նախագծին (որը նախնական տեքստից տարբերվում է հետևյալով՝ ընդունելի են Վահրամ Ապրեսյանի կողմից հնչեցված առաջարկները, նախնական տարբերակից հանվել են խորհրդի նախագահությունը վեց ամիսը մեկ այլ խորհրդի անդամի փոխանցելու մասին կանոնակարգումները, հանվել են բոլոր այն դրույթները, որտեղ խորհրդի նախագահը բացի նախագահելու իրավասությունից ունի նաև այլ միանձնյա իրավասություններ), ինչպես նաև ժողովի կողմից հաստատված երկու փաստաթղթերի փոփոխությունների նախագծերին հավանություն տալու մասին հարցը:

**<<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Տարեկան ընդհանուր ժողովը**

ՈՐՈՇԵՑ

Հավանություն տալ քվեարկության ներկայացված կանոնադրության և ժողովի կողմից հաստատված երկու փաստաթղթերի փոփոխությունների նախագծերին:
Որոշումը դրվեց քվեարկության.
Կողմ -95
Դեմ-5
Ձեռնպահ-0

5. «ՍԳԿԿ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը առաջարկեց անցնել օրակարգի 5-րդ հարցին, այն է՝.<<ՍԳԿԿ>> ԻԿ Դիտորդ խորհրդի կազմի ընտրության հարցը և առաջարկեց բոլորին՝ ներկայացնել «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդի 7 հոգանոց կազմի համար թեկնածուներ:

«ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդի կազմի համար տարբեր անդամների կողմից ներկայացվեցին թվով 20 թեկնածուներ՝ Սահակյան Տիգրան, Ասատրյան Վարազդատ, Ղահրամանյան Խաչատուր, Նազարյան Խաչիկ, Սարգսյան Արման, Եղյան Հովհաննես, Ապրեսյան Վահրամ, Վարդանյան Արարատ, Մկրտչյան Գարիկ, Պետրոսյան Լևոն Համբարձումի, Մարտիրոսյան Արտակ, Գևորգյան Գևորգ, Խաչատրյան Միհրան, Ավագյան Վահագն, Կարապետյան Արամ, Մարտիկյան Հենրիկ, Ղազարյան Շաքե, Խալաթյան Ռուբեն, Մարգարյան Ռուզաննա, Ավագյան Գևորգ :

Հաշվիչ հանձնաժողովի կողմից կազմվեց թվով 100 քվեաթերթիկ, որը ընդգրկում էր առաջադրված 20 թեկնածուների անուն, ազգանունները:

Հայտարարվեց, որ քվեաթերթիկներում միայն պետք է կատարվեն նշումներ թվով 7 թեկնածուների անունների մոտ, դրանից ավել կամ պակաս և ոչ սահմանված ձևով նշումների դեպքում քվեաթերթիկը կհամարվի անվավեր:

Քվեաթերթիկները բաժանվելուց հետո բոլորի համար տեսանելի տեղում տեղադրվեց փակ քվեատուփ և հայտարարվեց 3/երեք/ տարի ժամկետով «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդի կազմի ընտրությունների մեկնարկը:

Որոշ ժամանակ հետո Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը հայտարարեց քվեարկության ավարտը:

Հաշվիչ հանձնաժողովը անցավ հաշվարկի:

Հաշվարկները ավարտելուց հետո հաշվիչ հանձնաժողովի կողմից, ի դեմս Ռ.Հովհաննիսյանի **հրապարակվեց քվեարկության արդյունքները՝**

քվեարկությանը մասնակցել են 97 անդամներ
անվավեր ճանաչված քվեաթերթիկներ՝ 3 հատ

1. Տիգրան Սահակյանի օգտին քվեարկել է 70 ձայն
2. Վարազդատ Ասատրյանի. օգտին քվեարկել է 59 ձայն
3. Խաչատուր Ղահրամանյանի օգտին քվեարկել է 53 ձայն
4. Խաչիկ Նազարյանի օգտին քվեարկել է 31ձայն
5. Արման Սարգսյանի օգտին քվեարկել է 30 ձայն
6. Հովհաննես Եղյանի օգտին քվեարկել է 30 ձայն
7. Վահրամ Ապրեսյանի օգտին քվեարկել է 48 ձայն
8. Արարատ Վարդանյանի օգտին քվեարկել է 27 ձայն
9. Գարիկ Մկրտչյանի օգտին քվեարկել է 46 ձայն
10. Լևոն Հ.Պետրոսյանի օգտին քվեարկել է 33 ձայն
11. Արտակ Մարտիրոսյանի օգտին քվեարկել է 16 ձայն
12. Գևորգ Գևորգյանի օգտին քվեարկել է 30 ձայն
13. Միհրան Խաչատրյանի օգտին քվեարկել է 20 ձայն
14. Վահագն Ավագյանի օգտին քվեարկել է 15 ձայն
15. Արամ Կարապետյանի օգտին քվեարկել է 21 ձայն
16. Հենրիկ Մարտիկյանի օգտին քվեարկել է 16 ձայն
17. Շաքե Ղազարյանի օգտին քվեարկել է 15 ձայն
18. Ռուբեն Խալաթյանի օգտին քվերկել է 13 ձայն
19. Ռուզաննա Մարգարյանի օգտին քվեարկել է 12 ձայն
20. Գևորգ Ավագյանի օգտին քվեարկել է 24 ձայն

Ռ.Հովհաննիսյանը հրապարակեց 09.11.2024թ-ին կայացած «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի փակ քվեարկության արդյունքները և «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդի առավել շատ ձայն հավաքած 7 թեկնածուներին, որոնք ընտրվել են 3 /երեք/ տարի ժամկետով.

1. Տիգրան Սահակյան -70 ձայն
2. Վարազդատ Ասատրյան -59 ձայն
3. Խաչատուր Ղահրամանյան -53 ձայն
4. Վահրամ Ապրեսյան -48 ձայն
5. Գարիկ Մկրտչյան -46 ձայն
6. Լևոն Հ.Պետրոսյան -33 ձայն
7. Խաչիկ Նազարյան -31 ձայն :

6. «ՍԳԿԿ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը ներկայացրեց օրակարգի 6-րդ հարցը, այն է՝ Վերստուգիչ ծառայության կազմի ընտրության հարցը և առաջարկեց բոլորին «ՍԳԿԿ» ԻԿ Վերստուգիչ ծառայության 3 հոգանոց կազմի համար ներկայացնելու թեկնածուներ:

«ՍԳԿԿ» ԻԿ Վերստուգիչ ծառայության համար տարբեր անդամների կողմից ներկայացվեցին թվով 3 թեկնածուներ՝ Ջիվանշիր Աֆյան, Շաքե Ղազարյան և Արտակ Մարտիրոսյան, որոնք ընտրվելու են 3/երեք/ տարի ժամկետով:

«ՍԳԿԿ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը նկատի ունենալով, որ Վերստուգիչ ծառայության համար առաջարկվել է 3 հոգանոց կազմով թեկնածուներ, որը համապատասխանում է «ՍԳԿԿ» ԻԿ կանոնադրության 13.3. կետով սահմանված կազմի քանակին՝ առաջարկեց անցկացնել բաց քվեարկություն:

«ՍԳԿԿ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը առաջարկեց օրակարգի 6-րդ հարցը դնել բաց քվեարկության հետևյալ ձևակերպմամբ.

Հաստատել «ՍԳԿԿ» ԻԿ Վերստուգիչ ծառայության հետևյալ կազմը

1. Ջիվանշիր Աֆյան,
2. Շաքե Ղազարյան,
3. Արտակ Մարտիրոսյան:

<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Տարեկան ընդհանուր ժողովը

ՈՐՈՇԵՑ

Հաստատել «ՍԳԿԿ» ԻԿ Վերստուգիչ ծառայության հետևյալ կազմը
1. Ջիվանշիր Աֆյան,
2. Շաքե Ղազարյան,
3. Արտակ Մարտիրոսյան:

**Որոշումն ընդունվեց միաձայն:**

7. «ՍԳԿԿ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը ներկայացրեց օրակարգի 7-րդ հարցը, այն է՝ Կարգապահական հանձնաժողովի կազմի ընտրության հարցը և առաջարկեց բոլորին ներկայացնել «ՍԳԿԿ» ԻԿ Կարգապահական հանձնաժողովի 5 հոգանոց կազմի համար թեկնածուներ:

«ՍԳԿԿ» ԻԿ Կարգապահական հանձնաժողովի համար տարբեր անդամների կողմից ներկայցվեցին թվով 9 թեկնածուներ՝ Արմինե Մովսիսյան, Արմենակ Ադամյան, Ռուբեն Խալաթյան, Հարություն Գևորգյան, Լուսինե Սարգսյան, Վահե Նազարեթյան, Արարատ Վարդանյան, Արթուր Ապիկյան:

Հաշվիչ հանձնաժողովի կողմից կազմվեցին թվով 100 քվեաթերթիկ, որը ընդգրկում էր առաջադրված 9 թեկնածուների անուն, ազգանունները:

Հայտարարվեց, որ քվեաթերթիկներում միայն պետք է կատարվեն նշումներ թվով 5 թեկնածուների անունների մոտ, դրանից ավել, պակաս և ոչ սահմանված ձևով նշումների դեպքում քվեաթերթիկը կհամարվի անվավեր:

Քվեաթերթիկները բաժանվելուց հետո բոլորի համար տեսանելի տեղում տեղադրվեց փակ քվետուփ և հայտարարվեց 3/երեք/ տարի ժամկետով «ՍԳԿԿ» ԻԿ Կարգապահական հանձնաժողովի կազմի ընտրությունների մեկնարկը:

Որոշ ժամանակ հետո Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը հայտարարեց քվեարկության ավարտը:

Հաշվիչ հանձնաժողովը անցավ հաշվարկի:

Հաշվարկները ավարտելուց հետո հաշվիչ հանձնաժողովի կողմից, ի դեմս Ռ.Հովհաննիսյանի, **հրապարակվեց քվեարկության արդյունքները՝**

քվեարկությանը մասնակցել են 80 անդամներ
անվավեր ճանաչված քվեաթերթիկներ՝ 10 հատ

1. Արմինե Մովսիսյանի օգտին քվեարկել է 48 ձայն
2. Արմենակ Ադամյանի. օգտին քվեարկել է 41 ձայն
3. Հարություն Գևորգյանի օգտին քվեարկել է 38 ձայն
4. Արման Սարգսյանի օգտին քվեարկել է 37 ձայն
5. Լուսինե Սարգսյանի օգտին քվեարկել է 35 ձայն
6. Վահե Նազարեթյանի օգտին քվեարկել է 29 ձայն
7. Արարատ Վարդանյանի օգտին քվեարկել է 31 ձայն
8. Արթուր Ապիկյանի օգտին քվեարկել է 23 ձայն
9. Ռուբեն Խալաթյանի օգտին քվեարկել է 22 ձայն

Ռ.Հովհաննիսյանը հրապարակեց 09.11.2024թ-ին կայացած «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի փակ քվեարկության արդյունքները և «ՍԳԿԿ» ԻԿ Կարգապահական հանձնաժողովի առավել շատ ձայն հավաքած 5 թեկնածուներին, որոնք ընտրվել են 3/երեք/ տարի ժամկետով.

1. Արմինե Մովսիսյանի օգտին քվեարկել է 48 ձայն
2. Արմենակ Ադամյանի. օգտին քվեարկել է 41 ձայն

3. Հարություն Գևորգյանի օգտին քվեարկել է 38 ձայն
4. Արման Սարգսյանի օգտին քվեարկել է 37 ձայն
5. Լուսինե Սարգսյանի օգտին քվեարկել է 35 ձայն

Քվեարկությունից հետո «ՍԳԿԿ» ԻԿ Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը դիմեց բոլոր անդամներին առաջարկությամբ, որ եթե առկա են հարցեր, որոնք կցանկանային քննարկել սույն ժողովի ընթացքում, ապա կարող են ներկայացնել:

Հարցեր չառաջարկվեցին, այնուհետև «ՍԳԿԿ» Տարեկան ընդհանուր հաշվետու ժողովի նախագահող Լ.Պետրոսյանը հայտարարեց ժողովը ավարտված:

Նախագահ` Լ.Պետրոսյան

Քարտուղար` Գ.Հովսեփյան